

**ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) հայտարարում է մրցույթ՝ համապատասխան մարմինների աշխատակազմերում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար**

**ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 30-2.3-153)**

Իրականացնում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգով և թղթային տարբերակով ստացված պաշտոնական թղթակցության մուտքագրման, դրոշմակնքման, համարակալման, էլեկտրոնային համակարգում պատկերամուտով մուտքագրման աշխատանքները: Իրականացնում է հսկողություն աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կողմից գործավարության կարգի պահանջների պահպանման նկատմամբ: Իրականացնում է էլից թղթակցության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն «Mulberry» համակարգով և ՀՀ ազգային անվտանգության ծառայության սուրհանդակային ծառայության և «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով առաքման աշխատանքները: Իրականացնում է քաղաքացիների ընդունելություն, դիմումների, բողոքների, առաջարկությունների ընդունման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգում մուտքագրման, ՀՀ օրենսդրության համաձայն՝ առանձնացված գործերի կազմման և սահմանված ժամկետներում պահպանության, քաղաքացիների ընդունելության, դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման և պատասխանման գործընթացի նկատմամբ հսկողության, գրանցամատյանի վարման, քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների ուղղությամբ կատարված աշխատանքների վերլուծման և ամփոփման արդյունքների հիման վրա եռամսյակային տեղեկատվությունների նախապատրաստման աշխատանքները:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ,

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
- ռուսերենի ազատ տիրապետում,
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

Մրցույթը կկայանա 21.03.2018թ.՝ ժամը 14.15-ին, Խորհրդի շենքում (ք. Երևան, Տերյան 89):

Դիմող ՀՀ քաղաքացիները Խորհուրդ (ք. Երևան, Տերյան 89) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցութին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցութին ներկայանում են անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 21.02.2018թ. :**